

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

5.1. ՄԱԿ-ի կողմից երաշխավորված Արժույթի միջազգային հիմնադրամի Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմը (հաստատված ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի 30-րդ նստաշրջանում, 05.03.99թ.)

ՄԱԿ-ի Վիճակագրական հանձնաժողովի կողմից հաստատված, ինչպես նաև Միջազգային վիճակագրական ծրագրերի և ներդաշնակեցման Աշխատանքային խմբի կողմից երաշխավորված Ազգային սոցիալական տվյալների նվազագույն կազմում ընդգրկված 15 ցուցանիշներից 33 Ազգային վիճակագրական ծառայությունը 2000թ. հունվար-հունիսին տեղեկատվություն է ներկայացնում հետևյալ 10 ցուցանիշների վերաբերյալ.

1. Մշտական բնակչության թվաքանակն ըստ սեռի¹

հազ.մարդ

	Ամբողջ բնակչությունը	կին	տղամարդ
2000 թ. հունվարի 1-ի դրությամբ	3803.4	1956.6	1846.8
2000 թ. հուլիսի 1-ի դրությամբ	3803.6	1956.7	1846.9

2. Կյանքի սպասվելիք տևողությունն հաշվարկված ծննդից՝ ըստ սեռի 1999թ.²

տարի

Ամբողջ բնակչությունը	կին	տղամարդ
73.2	75.5	70.7

3. Մանկամահացությունն ըստ սեռի (մինչև 1 տարեկան)

1000 ծնվածի հաշվով

	Ընդամենը	աղջիկներ	տղաներ
1999թ. հունվար-դեկտեմբեր	15.4	13.4	17.2
2000թ. հունվար-հունիս	14.9	13.0	16.6

4. Երեխաների մահացությունն ըստ սեռի (մինչև 5 տարեկան)

1000 ծնվածի հաշվով

	Ընդամենը	աղջիկներ	տղաներ
1999թ. հունվար-դեկտեմբեր	19.2	17.3	20.9
2000թ. հունվար-հունիս	18.1	16.3	19.7

5. Մայրական մահացությունը 1999թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 32.9 (12 դեպք)՝ 100000 կենդանածինների հաշվով, իսկ 2000թ. հունվար-հունիսին՝ 40.1 (7 դեպք): Հարկ է նշել, որ միայն մարտ ամսին տեղի է ունեցել մայրամահացության 3 դեպք:

¹ Առկա բնակչության թվաքանակն արտագաղթի հետևանքով զգալիորեն պակաս է: Առկա բնակչության թվաքանակի ցուցանիշի վերաբերյալ արժանահավատ տվյալները բացակայում են արտագաղթի թերհաշվառման հետևանքով: Արտագաղթի մի մասն արտացոլող առավել արժանահավատ տվյալներ առկա են միայն օդային տրանսպորտով մեկնողների և ժամանողների ցուցանիշների տարբերության գծով: Ըստ 33 քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության կողմից իրականացվող ուղևորափոխադրումների հաշվառման տվյալների, 1992-1999թթ. հանրապետությունից մեկնողների թվաքանակն ավելի քան 622 հազար մարդով գերազանցել է ժամանողների թվաքանակը: Հարկ է նշել, որ սկսած 2000թ. մայիս-հունիս ամիսներից տեղեկություններ են ստացվել նաև երկաթգծով և ավտոտրանսպորտային միջոցներով (ավտոբուսներով, երթուղային տաքսիներով և թեթև մարդատար մեքենաներով) ուղևորափոխադրումների վերաբերյալ:

² Կյանքի սպասվելիք տևողության հաշվարկի համար հիմք են հանդիսանում տվյալ տարվա մահացության սեռատարիքային գործակիցները, ընդ որում նշանակալից է մինչև 1 տարեկան հասակում մահացության մակարդակը:

6. **Հակաբեղմնավորիչների օգտագործման հաճախականությունը** 2000թ. հունվար-հունիսին 1000 պտղաբեր տարիքի (ֆերտիլային) կնոջ հաշվով կազմել է 31.5 դեպք:

7. **Ուսումնառության միջին տևողությունը դպրոցներում** 1999/2000 ուսումնական տարում կազմել է 10 տարի:

12. **ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով** 1999թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 260067 դրամ կամ 486 ԱՄՆ դոլար, 2000թ. հունվար-մարտին համապատասխանաբար՝ 34483, 65, իսկ 2000թ. հունվար-հունիսին՝ 91633, 172:

14. **Գործազրկության մակարդակը** 2000 թ. հունիսին կազմել է 11.9 տոկոս և նախորդ տարվա նկատմամբ ավելացել է 0.5 տոկոսային կետով: Ընդ որում կանանց գործազրկության մակարդակը 2000թ. հունիսին կազմել է 14.9 տոկոս և նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ ավելացել է 0.3 տոկոսային կետով, իսկ տղամարդկանց գործազրկության մակարդակը կազմել է 8.8 տոկոս և ավելացել 0.7 տոկոսային կետով:

15.2000թ. հունվար-հունիսին **տնտեսության մեջ զբաղված է եղել** ՀՀ ողջ բնակչության 33.9 տոկոսը, այդ թվում կանայք 32.3 տոկոս, տղամարդիկ 35.6 տոկոս:

Բացի վերոհիշյալներից, ՀՀ Ազգային վիճակագրական ծառայությունը ներկայացնում է հետևյալ լրացուցիչ **սոցիալական ցուցանիշները**.

Հանցագործությունների քանակը 10 հազ. բնակչի հաշվով 2000թ. 1-ին կիսամյակում	16.4 դեպք
Մեկ բնակչի ապահովվածությունը (առ 01.01.99թ.) բնակելի մակերեսով, քառ.մ	10.8
ընդհանուր մակերեսով,քառ.մ	16.1
Բնակարան ստանալու և բնակարանային պայմանները բարելավելու համար հերթագրված ընտանիքներ, %-ով ընտանիքների ընդհանուր քանակից (առ 01.01.2000թ.)	5.1
Բնապահպանական իրավախախտումների հետևանքով վարչական տույժի ենթարկված մեկ անձի հաշվով սահմանված տուգանքը 2000թ. 1-ին կիսամյակում, հազ. դրամ	12.1
Նոտարի կողմից վավերացված գործարքների քանակը 1000 բնակչի հաշվով	29.5
Մեկ գործարքի հաշվով գանձված պետական տուրքը 2000թ. 1-ին կիսամյակում, դրամ	3400
1999թ. երեխաների ընդգրկվածությունը նախադպրոցական հաստատություններում /տոկոսով 1-6 տարեկան երեխաների թվաքանակից/	17.8%
1999թ. երեխաների միջին թվաքանակը ՆԴՀ մեկ խմբի հաշվով, մարդ	20
1999թ. ՆԴՀ 100 տեղին ընկնող երեխաների թվաքանակը, մարդ/խումբ	59.6
1999թ. ՆԴՀ մեկ մանկավարժի հաշվով երեխաների թվաքանակը, երեխա/մանկավ.	7.6
1999թ. մեկ ՆԴՀ հաշվով երեխաների թվաքանակը, մարդ	61
1999թ. երաժշտական,1000 դպրոցահասակ երեխայի հաշվով	20
արվեստի և գեղարվեստի1000 դպրոցականների հաշվով	26
դպրոցներում սովորողներ դրամական ծախսերը մեկ սովորողի հաշվով՝ հազ.դրամ	29.6
1999թ. այցելություն թանգարաններ 1000 բնակչի հաշվով	227
1999թ. միջին հաշվով մեկ թանգարանի զբաղեցրած մակերեսը, քառ. մ	775.8
1999թ. առաջացած մեկ բնակչի հաշվով, կգ	46.7
թափոնների քանակը	մեկ քառ. կմ-ի հաշվով (առանց Սևանա լճի հայելու մակերեսի), տ մեկ հաշվետու կազմակերպության հաշվով, տ
1999թ. բնապահպանության ընթացիկ ծախսումներն այդպիսի միջոցառումներ իրականացրած մեկ կազմակերպության հաշվով , մլն. դրամ	1.2
1999թ. վնասակար նյութերի արտանետումը մթնոլորտ արտանետման անշարժ աղբյուրներից	մեկ բնակչի հաշվով, կգ մեկ քառ. կմ-ի հաշվով (առանց Սևանա լճի հայելու մակերեսի), կգ մեկ հաշվետու կազմակերպության հաշվով, տ
	5.7 763.0 43.7

5.ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1999թ. բնապահպանական և բնօգտագործման վճարները	մեկ բնակչի հաշվով, դրամ	309.7
	մեկ հաշվետու կազմակերպության հաշվով, մլն. դրամ	1.0
1999թ. 1000 քաղաքաբնակի հաշվով թափոնակուտակիչներ տեղափոխված կոշտ կենցաղային աղբի քանակը, խոր. մ		1234
1999թ. Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի մեկ բնակչից կենցաղային կոշտ աղբի տեղափոխման դիմաց ամսական գանձված գումարը, դրամ		120
1999թ. սանմաքրման համակարգում ընդգրկված մեկ քաղաքաբնակի հաշվով ծախսերը, դրամ		555.6
1999թ. մեկ բնակչին բաց թողնված ջրի օրական քանակը, լիտր		134